

ՄԻՍԱԿ Խ. ՆՈՒՊԱՐԵԱՆ

ՏԱՂԵՐ ԵՒ ՅՈՒՇԵՐ

ԳԻՆ 75 ՖՐԱՆՔ

IMPRIMERIE H. TURABIAN

227 BOULEVARD RASPAIL

PARIS

1947

891.99

1105

٩٨ - ٩٨

၆၀၆ နှစ် ၇၂၀၆, ၆၀၆

Smile to the world.

A close-up photograph of a light-colored, textured surface, possibly a book cover or endpaper. The surface is divided by a prominent diagonal crease running from the top left towards the bottom right. To the right of this crease, there is a grid pattern of dark, thin lines forming rectangular cells. The overall texture appears slightly grainy or fibrous.

91.99
4-98

891-981

✓

ՄԻՍԱԿ Խ. ՆՈՒՊԱՐԵԱՆ

ՏԱՂԵՐ ԵՒ ՅՈՒԺԵՐ


1705

A 80597



ԳԻՆ 75 ՖՐԱՆԲ

IMPRIMERIE H. TURABIAN
227 BOULEVARD RASPAIL
PARIS



Սոյն հատորը կը ձօնեմ Հայաստանի եւ Հայ ժողովուրդի ազատագրութեան սրբազան Դատին համար՝ Համաշխարհային Ա. պատերազմի ընթացքին՝ Կովկասեան նակատին վրայիերասարար կռուած եւ պատուոյ դաշտին վրայ ինկած կամաւոր ընկերներուս, ինչպէս նաեւ Ապրիլեան Եղեռնի միլիոնաւոր Հայ անմեղ զոհերու խնկելի յիշատակին:

ՄԻՍԱԿ Խ. ՆՈՒՊԱՐԵԱՆ

1915 Թ. ԱՆԴՐԱՆԻԿԻ ԶԻՆԻՈՐՆԵՐՈՒ ԵՐԳԸ

ԶՕՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ

Հերոս մոնչեց, Սուլթան դողդըղաց,
Վիլհելմի աչքէն արտասոււք ցոլաց:
Սուրբը թշնամու կուրծքին շողշողաց,
Հայոց ղեկավար, հերոս Անդրանիկ:

Քեզ համար պէտք է կատարենք մաղթանք,
Անգուք թշնամուն ցոյց տուող տանջանք.
Դուն պէտք է ըլլաս, մեր փառքն ու պարծանք
Ո՛վ քաջ զօրավար, հերոս Անդրանիկ:

Պարզէ դրօշակ, տեսնէ Եւրոպան,
Թող բացագանչէ կեցցէ Հայաստան,
Կեցցես դուն յաւիտ, հերոս հայկական
Հայոց ղեկավար, հերոս Անդրանիկ:

Դուն պէտք է փրկես ամբողջ Հայաստան,
Կարին եւ Սասուն, մայրաքաղաք Վան,
Տիգրանակերտէն մինչեւ Շաւարշան
Սուրա՛նդադար, հերոս Անդրանիկ:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԹԻՒ 1 ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

ԵՒ ՎԻԼՀԷԼՄ Բ. ԻՆ

Վնիռ մըն էր արֆայի
Գոռոզ գերման հսկայի:
Պատերազմը պայթեցուց,
Առատ արիւն հոսեցուց:

Ի՛նչ տխուր եւ չարադէտ
Ելան գործեր քու ձեռքէդ.
Ընել աշխարհն աւերակ
Եղաւ քեզի նըպատակ:

Ոհ Վիլհելմ, դուն չար արֆայ
Թերեւս օր մը սատանայ
Քեզի եղաւ առաջնորդ
Որ ըլլաս մարդու որսորդ:

Դուն փառքերով շլացած
Եւ տենջերով ալ արփած,
Տիրոջ ըլլալ հաւասար
Ուզեցիր բայց վար ինկար:

Ոհ, քու սրտիդ չարութիւն
Եղաւ քեզի համար թոյն:
Տիրոջ եղար թշնամի
Եւ մարդկութեան ատելի:

Քեզի նման արքաներ
Շատ են եկեր եւ անցեր .
Եւ կարն օրերն ալ փառքի
Տըխուր դրուագ մ'է կեանքի :

Հովանիիդ տակ վերին
Կեանք շնչեցիր Էնվերին,
Մահ սփռեցիր դուն աշխարհ
Ով դուն Վիլհելմ, արքա՛յ չար :

Անգուք թուրքը կեանք առած,
Իր որջին մէջ ծըւարած
Արեան մատնեց Հայաստան
Եւ սուգ մտաւ ազգ համայն :

Թո՛ղ չի խնդայ բայց Էնվեր
Թէ հայուքեան որդիներ
Եղան բոլոր նահատակ :
Օր մ'ինք կ'ըլլայ շանսատակ :

Մինչ կուգայ օրն յաղթութեան
Կը փայլի կեանքն հայուքեան
Եւ կը բացուին վարդեր նոր
Սրտերու մէջ սգաւոր :

Յուլիս 1917, Սոչի

ՆՈՒԷՐ ԱՊՐԻԼԵԱՆ ՍԳԱՏՕՆԻՆ

Կը յիշեմ միշտ ու կ'երգեմ մեր ցաւերն հին
Անցած տխուր օրերն իմ թըշուառ ազգին :
Անգուք ցաւերը միշտ անվերջ, նորանոր
Ըրին օրերս անմըխիթար, սրգաւոր :

Եւ կը յիշեմ ո'հ ռնիրներն ալ անվերջ
Մրեամբ գրուած մեր պատմութեան մէն մի էջ :
Սերունդներուն լաց ու ողբն են երգերս ալ ,
Անո'նց է որ կ'ուզեմ զանոնք նըւէր տալ

Ապրիլեան այս սրգատօնին : Բայց ի՛նչ փոյթ
Թէ թըշնամին տըւաւ վնիռն իր անգուք ,
Եւ գերեզման փորեց հերոս հայ ազգին :

Դուն յաղթեցիր մահուան ո՛վ իմ ցեղս անգին
Եւ յարութիւն առիր, ո՛վ իմ Հայաստան
Ու բացիր նոր շրջան մը քու պատմութեան :

10 Ապրիլ 1945 Բարիգ

ԱՌ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Ի՛նչ գեղեցիկ ես տեսնովրդ գոհար,
Կը դիտեմ քեզի, անբա՛խտ Հայաստան:
Թափառական եմ քեզմով խանդավառ
Քեզ կը սիրեմ միշտ սիրով անսասան:

Նստած ես գահիդ վրայ սգաւոր,
Դարաւոր վէրքերդ են արիւնահոս.
Արցունքն աչքերուդ ցաւեր բիւրաւոր
Սակայն դեռ կ'ապրիս, հայրենի՛ք հերոս:

Յաղթուք իւններով Անցեալդ է շքեղ
Տարուած թշնամւոյն վրան ամէն հեղ.
Բացուած ես սրտին Արեւելին վարդ
Եւ Պատմութեան մէջ ապրած միշտ անյաղթ:

Որքան ալ լինւած, անտէր եւ թշուառ,
Թշնամիներէդ պիտ' չմընաս վար
Եւ պիտի ապրիս, հերո՛ս հայրենիք:
Ես ալ պիտ' տեսնեմ օրերդ երջանիկ:

ՆՈՒԷՐ ԵՐԵՒԱՆԻՆ

Դարձեալ կը ծխայ ծուխը հայրենի
Քարուփանդ անտէր հէգ Հայաստանի:
Դարձեալ կեանքը ժիր կը յառնէ այնտեղ,
Երեւանի մէջ տեսնով վարդագեղ:

Դարձեալ պննուած է Հայոց Մասիս,
Ծաղիկներով բիւր անթառամ ազգիս:
Սրինգը գրկած, կը հիւսէ հօտաղ
Ցիրուցան եղած եղբայրներուն տաղ:

Մայրիկը թշուառ կ'օրրէ իր մանկիկ
Եւ կ'օրհնէ բարիքն որ տըւաւ երկինք:
Հայրենի հոգւով գրկած է ուժգին
Զինուորն ապագայ պաշտպան իր ազգին:

Սուրեր բարբարոս անգութ թշնամւոյն
Զարկին փանդեցին մեր հայրենի տուն.
Կ'անցնին գուլումներ եւ էջմիածին
Կ'ապրի միշտ անմահ ու միշտ վերածին:

22 Փետրուար 1926

ԱՍՏՈՒԱՇՈՒՆՁԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

ՀԱԶԱՐ ՀԻՆԳ ՀԱՐԻՒՐ ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ

Մեծարանքով ու խանդավառ,
Կը թղթատեմ քեզ սիրով յար.
Դուն դարաւոր լոյսն ես անգին,
Անմահ կոթող հին իմ ազգին:

Վառ նանանչներդ առաքինի,
Կը լուսեն կեանքն Հայաստանի:
Դուն բիւրեղ ջահ պատմութեան մէջ,
Լոյս են չֆնաղ էջերդ անշէջ:

Դուն թարգմանն ես մեր պապերուն,
Փառքը եղար հին օրերուն:
Դուն քաջ հովիւ, մեծ ու անպարտ
Պահեցիր հայն հոգւով հրպարտ:

Թափառական եւ անտերունչ,
Քեզ կը պաշտեմ, Աստուածաշո'ւնչ:
Թո՛ղ հալածէ մեզ թշնամին,
Դուն կը մընաս անխոցելին:

1936 Յուլիս, Բարիզ

ԱՌ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Հեռուէն կը դիտեմ քեզ գերդ ուխտաւոր
Քու տեսիլդ կարօտ, սրտով սգաւոր:
Զի կը սիրեմ քեզ անբա՛խտ Հայաստան,
Կապուած հոգիովս, հոգւոյդ աննման:

Դեռ շատ պզտիկ ես հագիւ թէ մանուկ:
Դեռ կը հեծէիր լուծի տակ ստրուկ.
Ես քեզ սիրեցի գերդ քու հարազատ,
Եւ մարտնչեցայ որ ըլլաս ազատ:

Դարերով գեղ հարուածեց ոսոխ,
Բարբարոսներու եղար ոտնակոխ,
Արեան հեղեղով ծածկուած անդադար,
Անտարբերութեամբ դիտեց քեզ աշխարհ:

Գլուխըդ ծըռած խոր վերքերուն տակ
Թշնամիին դէմ բարձրացար շիտակ.
Անցար դժոխսէն դուն միշտ յաղթական
Գացիր դէմ մահուան, հերո՛ս Հայաստան:

Այժմ նորածին ու սրտով արի,
Լուծն ստրկութեան փշրած օտարի,
Յաղթական կ'ապրիս, ուրախ ու զուարթ,
Պատմութեան առջեւ կանգնած ես հպարտ:

1936 Օգոստոս

ՁՕՆ ՆՈՐ ՀԱՅ ԳՐՈՂԻՆ

Կը կարդամ քու տողեր գոհար,
Բռնկած սրտով ու խանդավառ:
Կ'արթննան իմ անցեալ յուշեր.
Եւ կ'արծարծի հայրենի սէր:

Ու կարօտի վերք անհամար,
Կը զգամ սիրտիս մէջ վշտահար:
Բայց եւ գիտեմ որ այս տըխուր
Օրերէ վերջ արփի մը հուր

Պիտի ժպտի գերդ նոր գարուն
Մեր հայրենի սէգ լեռներուն,
Եւ սրտերուն մեր սգաւոր
Եւ շրթներուն բերէ երգ նոր:

ՍԵՄԱՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գերանդին հնձեց ծաղիկ կեանք մը եւս :
Դեռ շատ երիտասարդ, խանդավառ եւ մեծ հայ-
րենասէր հոգիով մը կ'ապրէր օտարութեան
մէջ : Հազիւ հազ աղատուած մեծ եղեռնի մահ-
ւան ճիրաններէն եւ հաստատուած Ֆրանսայի
հիւրասէր հոգին վրայ, սնած եւ աճած անոր
մշակոյթով, որպէս ծաղիկ մը կը բացուէր իր
տարաբաղդ աղգին ծոցին մէջ : Որպէս բանա-
ստեղծ առաջնակարգ տեղ մը գրաւած էր՝ օտար
ափերու վրայ թափառող հայ նոր սերունդին
մէջ :

Բայց աւա՛ղ, դեռ իր նախատակին չհասած,
դեռ իր դրական մեծ ծրագիրները չիրագործած
ընկաւ անգուլթ թշնամու գնդակներէն, ռազմա-
ճակատի առաջաւոր դիրքերուն մէջ : Ընկաւ
հայ ցեղի ծաղիկը, իր երկրորդ եւ հիւրասէր
հայրենիքին՝ Ֆրանսասի պարտականութեան
ճամբուն վրայ եւ անյայտ գերեզմանի մէջ կը
հանգչի իր շատ մը ընկերներով :

Այս մի քանի տողերս թող ըլլան ծաղկեկ-
պսակ իր անյայտ գերեզմանին վրայ, նուիրւած
իր անմոռանալի յիշատակին :

15508
A II

ՆԱՄԱԿ ԵՂԲՕՐՍ՝ ԱՐՍԷՆԻՆ

1915 Ապրիլ 9

Սիրելի եղբայրս Արսէն,

Քանի մը տարիէ ի վեր զատկական օրը ծը-
նողական տունէն հեռու կը տօնեմ: Բայց այս
տարի զայն բոլորովին տարբեր պայմաններու
տակ կը տօնեմ: Պարսկաստանի Ատրպատակա-
նի Տիգրատիչ կոչուած գիւղին մէջ, շրջապատ-
ւած զանազան տեղերէ հաւաքուած հայ երի-
տասարդներով, հայրենիքի նուիրական ճամ-
բուն վրայ:

Զատիկը անցուցի համեստ սեղաններով,
թէ ուրախ եւ թէ տխուր: Ուրախ՝ որովհետեւ
այս տարի պիտի վճռուի մեր ազգային ճակա-
տագիրը: Մինչեւ այսօր, Կովկասեան ճակա-
տին վրայ մեր մղած կռիւներուն մէջ յաղթա-
կան ենք: Տխուր՝ որովհետեւ շատ մը հակասա-
կան լուրեր կ'ստանամ զանազան կողմերէն:

Երբ Կոթուրէն (Վանի մօտ) նահանջեցինք,
լուր առինք որ թուրքերը Թիֆլիսին մօտեցած
են: Զօրավար Նազարբէկեան մեր նահանջի
ճամբան փոխեց որպէս զի գերի չի յնանք: Քա-
նի մը օր վերջը լուր առինք որ թրքական բանա-
կը Սարիկամիշի առջեւ չարաչար պարտուած
է: Մենք դարձեալ շարունակեցինք մեր նահան-
ջը, բայց ուրախ սրտով:

Դեկտեմբերի վերջին օրը Արաքսէն ան-
ցանք եւ նոյն իրիկունը հասանք Ջուլֆա քաղա-
քը, ուր մեզ համար պատրաստուած շէնքերուն
մէջ՝ խոտերուն վրայ պառկելով: Մեր նահան-
ջը շատ տխուր եւ սրտածմլիկ էր: Մանաւանդ
պարսկահայ դադթականութեանը: Չեմ գիտեր
ինչպէս նկարագրեմ այն տխուր դադթականու-
թիւնը, որուն ես ականատես եղայ: Յուրտ ձը-
մեռով կին ու մանուկներ գիշեր ցորեկ կը նա-
հանջեն, համարեայ մերկ վիճակի մէջ, որով-
հետեւ նահանջը անակնկալօրէն տեղի ունեցաւ:
Բարերախտաբար, օգնութեան հասան Ռուսա-
կան Կարմիր Սաչը եւ Մոսկուայի Հայոց Օգնու-
թեան Կոմիտէն՝ իրենց եղբայրական եւ մարդ-
կային աջակցութիւնը ընծայելու համար:

Երբ Ջուլֆա հասանք, մի շարք Ռուսահայ
երեւելիներէն լսեցի, որ Ռուսերը պիտի պար-
պեն Կովկասը եւ կովկասեան բանակը պիտի
փոխադրեն Եւրոպական ճակատը, ուր Բրիտի-
տի բանակը մատնուած էր նեղ կացութեան
մը: Ի՞նչ մեծ սարսուռ մը գդացի, եղբայր: Ո-
րովհետեւ, եթէ Ռուսերը Կովկասը պարպէին,
եւ Թուրքերը դայն գրաւէին, Հայ անունը աշ-
խարհիս վրայէն պիտի վերնար: Բայց հայ երե-
ւելիները այս տխուր որոշման առաջըր առին,
եւ մեզ, այսինքն Չօր. Նազարբէկեանի բանա-
կը ղրկեցին դարձեալ Ատրպատական՝ Խալիլ
փաշայի դէմ, որ մեծ գործունէութեան մէջ
էր: Յունուար 14ին իրիկունը հասանք Մարանդ
գիւղաքաղաքը, եւ հրաման ստացանք որ պատ-
րաստ ըլլանք միւս առաւօտեան յառաջ շարժե-
լու Թուրքական բանակին դէմ:

Երբ Մարանդէն վաղ առաւօտեան յառաջ
շարժեցանք, օդը ամպոտ էր եւ ցուրտ: Բաւա-
կան երթալէն վերջ սկսաւ ձիւնափոթորիկը:

Բայց մենք նորէն շարունակեցինք մեր ճանա-
պարհը: Երեկոյեան դէմ երբ մօտեցանք Սօֆ-
եան գիւղաքաղաքը, Թնդանօթները սկսան որո-
տալ: Մեզմէ առաջ, Զօր. Նազարրէկեալ, իր
ձիաւորներով եւ Թնդանօթներով կը յառաջա-
նար: Պարսիկներէն իմացաւ որ Թուրքական
բանակը, փոթորիկի պատճառով, ապաստա-
նած է Սօֆեան: Զօր. Նազարրէկեան անմիջա-
պէս պաշարեց քաղաքը եւ բմբակոծեց: Թուր-
քերը, յանկարծակիի եկած, անմիջապէս քա-
ղաքէն դուրս ելան եւ վազեցին դիրք բռնելու:
Բայց անօգուտ: Զօր. Նազարրէկեան հրամա-
յեց անդադար բմբակոծել քաղաքը: Եւ Թուր-
քական բանակը սարսափահար փախուստի դի-
մեց՝ ձգելով հազարաւոր զիակներ ռազմադաշ-
տի վրայ:

Միւս առաւօտ արեւուն ճառագայթներուն
տակ կը պատինք ուրախ եւ գուարթ: Այդ օրէն
մինչեւ այսօր կռիւ չենք ունեցած: Բայց, մեր
առած լուրերուն նայելով, կը դռնուինք մեծ եւ
վճռական ճակատամարտներու նախօրեակին:
Որովհետեւ Թուրքերուն միակ յոյսը այս ճա-
կատն է:

Զուլֆայի մէջ պատահեցայ շատ մը Ռու-
սահայ երեւելիներու, որոնք հակառակ են մեր
Թուրքահայ կամաւորութեան, ըսելով թէ դուք
եղբայրներ չունիք Թուրքիոյ մէջ . . . : Այո,
գիտեմ որ այս կամաւորական շարժումը կու-
սակցական գործ մըն է ոչ թէ համազգային:

Իսկ կամաւորական կարգ մը գունդերը ղե-
կավարողները՝ գրել կարդալ չի գիտցող մար-
դիկ են: Վա՛յ, այս խեղճ ազգին:

Ռուսիոյ ցարը՝ Նիկոլա Բ. Կովկասի ճակա-
տը այցելութեան առթիւ, տեսնելով հայ կամա-
ւորները, մեծապէս գոհ մնացած եւ ըսած է —

«ամէն Ռուս—Թուրքական պատերազմին հայե-
րը մեզի օգնած են: Այս պատերազմէն վերջը
Հայոց ազգային նպատակը պիտի իրագործեմ»:
Մենք ունինք Ռուսական բանակին մէջ լաւա-
գոյն հայ սպաներ: Իսկ մեր ճակատի ղեկավար
գորավարը հայ մըն է, Նազարբէկեան՝ ազնիւ
մեծ հայրենասէր եւ կարող գորավար մը: Իսկ
Ռուս գորավարները մեծ յարգանքով կը վերա-
բերուին մեզ՝ հայերու հանդէպ:

Շատ մօտէն կը հետեւիմ Թուրքահայու-
թեան կեանքին թէ՛ պարսիկ երեւելիներուն եւ
թէ մեզի գերի ընկնողներուն միջոցաւ: Կը կար-
ծեմ թէ մեծ հալածանք կայ Թուրքիոյ մէջ հա-
յերուն հանդէպ: Դուն ի՞նչ տեղեկութիւն որ
առնես, անմիջապէս գրէ ինձ: Իմ կազմս շատ
տկար է. մանաւանդ ջերմը զիս հանգիստ չի
թողուր, բայց որոշած եմ մինչեւ պատերազմին
վերջը ճակատ մնալ:

Վերջացնելով նամակս, կը խնդրեմ քեզմէն
որ այս նամակս պահես եւ երբ Տրապիզոն եր-
թաս յանձնես մայրիկիս, հայրիկիս, եղբայր-
ներուս, թոռնիկներուս մասնաւոր բարեւնե-
րովս: Թերեւս ես բախտ չունենամ անգամ մը
եւս զանոնք տեսնելու:

Մնամ եղբայրական սիրով

ՄԻՍԱԿ ՆՈՒՊԱՐԵԱՆ

9 Ապրիլ 1915

Տրապիզոն, 24 Ապրիլ 1916

Սիրելի եղբայրներ,

Հաստատելով որ Ռուսները Տրապիզոն մը-
տած են, որոշեցինք լեռներէն իջնել եւ քաղաք
երթալ. ճանապարհին որոշեցի քանի մը ընկեր-
ներով մեր տունը վերադառնալ եւ այս մի քանի
տողերս ձեզ գրել եւ մեր ողջութիւնը (իմ, Գը-
րիգոր եղբորս եւ հայրիկիս) ձեզ յայտնել: Ողջ
են նաեւ մեր ազգականներէն Փնտկեան Աղաճա-
նը եւ իր տղան Երուանդը, Գանսզեան Մինակը
եւ մէկ տղան: Իսկ միւս բոլորը սպանւած են:

Երբ մեր տուն մտայ, աչքերս սեւցան,
խելքս դարձաւ, բայց ընկերներուս խնամքը զիս
քիչ մը հանգստացուց եւ մեծ սեղանը պարզեցի:
Այս նամակը մատիտով կը գրեմ: Այս սեղանին
շուրջը անցեալ տարի ճիշդ այս ժամանակ հա-
ւաքուած էին մայրիկս, քոյրիկս Վառեակը,
հարսները եւ թոռնիկներս՝ Համբարձումը, Ան-
դրանիկը, Գոհարիկը, Սարգիսը, Արամը եւ
Հայկը: Արցունքով կ'անցընէինք մեր օրերը լը-
սելով տխուր լուրերը: Միակ միւթարութիւնը
որ ունէինք այն էր թէ՛ Ռուսները մօտ ատենէն
պիտի գրաւեն Տրապիզոնը: Բայց ի դուր:

Մայիսի առաջին օրերը սկսաւ տեղահանու-
թիւնը: Հայրիկս եւ Գրիգոր եղբայրս որոշեցին
որ բոլոր երիտասարդները լեռները քաշուին:
Բայց շատ շատերը հակառակեցան: Միայն ես

Հայրիկս եւ Գրիգոր եղբայրս որոշեցինք առժամաբար քաշուիլ անտառները եւ անձնատուր չըլլալ ոստիկաններուն: Քոյրիկս Վառեակը ուղեց անձնասպան ըլլալ տան մէջ, բայց մայրիկս չը թողուց՝ մխիթարելով որ այս դէպքերը անցողակի են:

Չեմ կրնար նկարագրել այն տխուր տեղահանութիւնը, որուն ենթարկուեցաւ Հայ ժողովուրդը: Տրապիզոնէն մինչեւ Էրզրում ամբողջ ճանապարհը լեցուեցաւ հայերու դիակներով:

Եթէ քրիստոնեայ եւ քաղաքակրթուած եւրոպան այս ոճիրները ներէ թուրքիոյ, նկատեցէք որ Աստուած չկայ: Մօտ ատենէն ձեզ տեսնելու պիտի դամ: Բարեւներս ձեզ բոլորիդ:

Մնամ եղբայրդ ՅՈՎՍԷՓ ՆՈՒՊԱՐԵԱՆ

(1918ին Էրզրումի կռիւներուն մէջ սպաննրւեցաւ 23 տարեկան ծաղիկ հասակին մէջ)

ԴԻԼԻՄԱՆԻՆ (ԱԻԱՐԱՅՐ)

ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Որքան որ էնվէր բաշայի թուրքական բանակը Սարիկամիշին առջեւ 1914 Դեկտեմբեր 12 էն մինչեւ Յունուար 5, 1915) պարտուեցաւ, բայց դարձեալ Կովկասեան ճակատը ապահով չէր: Որովհետեւ թուրքերը իրենց փրկութեան յոյսը այդ ճակատին վրայ դրած էին, Կովկասի մէջ գտնուող իրենց կրօնակից ազգերուն հետ:

Էնվէր բաշայի ծրագիրն էր էրզրումի ուղղութեամբ Թիֆլիս մտնել, մինչդեռ Խալիլ բաշան, Ատրպատականի վրայօք Թաւրիզէն Բագու պիտի իջնէր, իսկ ծովեզերքէն Կէօպէն եւ Պրիսլաւ մարտանաւերը Կովկաս զինուոր պիտի հանէին:

Գերմանիան ինչպէս 1914 թ. պատերազմին իր յոյսը Թուրքիոյ վրայ դրած էր, իսլամական աշխարհը Անգլիոյ եւ Ռուսաստանի դէմ հանելու համար, նոյնպէս 1939 թ. պատերազմին, բայց այս անգամ ուրիշ ուղղութեամբ: Գերմանիան տկար կարծելով Ռուսաստանը, որոշեց Խրիմի վրայօք արշաւել Կովկաս եւ միւս կողմէն Թուրքիան ոտքի հանել: Այս երկու պատերազմներուն մէջ Հայ Ժողովուրդը ունեցաւ իր մեծ դերը՝ յաջողութեան համար, շնորհիւ իր զօրավարներուն:

Զօր. Նազարբէկեան, 1914—1918 թ. պատերազմի նախօրեակին, Պարսկաստանի ուղղու-

Թեամբ հասաւ Կոտուր, փոքրիկ ընդհարումնե-
րով: Իսկ անկէ սկսաւ առաջին նահանջը մինչեւ
Ջուլֆա: Նահանջի պատճառն էր էնվէր բաշայի
առաջին յաջողութիւնները Սարիկամիշի ուղ-
ղութեամբ: Բայց յետոյ պարտուեցաւ եւ նա-
հանջեց: Իսկ Ջուլֆայէն Ջօր. Նազարբէկեան
հրաման ստացաւ դարձեալ անցնիլ Պարսկաս-
տան:

Անդրանիկին գունդը, Ռուսական բանակին
հետ Յունուար 10ին Ջուլֆայէն ճամբայ ելաւ
դէպի Ատրպատական, ուր այդ ժամանակ Խա-
լիլ բաշան մեծ գործունէութիւն ցոյց կուտար:

Ռուսական բանակը յառաջանալով Պարս-
կաստան, Յունուար 15ին շահեցաւ Սօֆիանի
պատմական ճակատամարտը: Յետոյ բանակը
մնաց Ատրպատական, ունենալով փոքրիկ կռիւ-
ներ Թուրք բանակին հետ, փոխն ի փոխ յաջո-
ղութեամբ: Թուրք բանակին պարենաւորման
պայմանները եւ Վանի դէպքերը ստիպեցին Խա-
լիլ բաշան օր առաջ սկսիլ իր յարձակողականը:

Վերջապէս Ապրիլ 17ին Ռուս եւ Թուրք բա-
նակները կանգնեցան դէմ առ դէմ: Խալիլ բա-
շան նամակ դրկեց Անդրանիկին որ անձնատուր
ըլլայ: Անդրանիկ մերժեց:

Դիման քաղաքը կը գտնուի Մուղանճուքի
դաշտին մէջ, իսկ դաշտին մօտ անմիջապէս,
Ուրմիոյ լիճէն սկսեալ, կը սկսին լեռները, ո-
րոնք կ'երկարին բաւական հեռուները: Նոյն ի-
րիկունը Ջօր. Նազարբէկեան Խոյէն օգնական
զօրքեր եւ Թնդանօթներ առած եկաւ հասաւ:
Ան կարգի բերաւ զինւորները եւ հրամայեց գը-
րաւել Մուղանճուքի ետեւի լեռները եւ նոյն գի-
շերը խրամատներ փորել: Ջօր. Նազարբէկեան
պատերազմի յատակագիծը ունէր եւ ըստ այնմ
զինւորները կը դասաւորէր: Մենք՝ կամաւոր-

ներս՝ բռնած էինք ձախ թեւը, այսինքն Ուրմիոյ լիճէն սկսեալ, իսկ Ռուսերը՝ աջ թեւին լեռները: Մենք պաշտպանողականի վրայ պիտի մնայինք:

Առնուած լուրերուն համաձայն, խալիլ բաշան ունէր 18 թնդանօթ եւ 24 գնդացի, 16 հազար կանոնաւոր զինւոր եւ 8 հազար պարսիկ եւ քիւրտ անկանոն զինւոր: Իսկ մենք՝ 8 հազար կանոնաւոր զինւոր եւ 800 կամաւորներ, 16 թնդանօթ եւ 18 գնդացի ունէինք:

Ապրիլ 17ին երեկոյեան դէմ բարձրացանք Մուղանճուքի լեռները, Ուրմիոյ լիճէն ոչ հեռու, պարզ օդով մը, կը սպասէինք հրամանի: Նոյն իրիկունը, սպայ Ա. Շահխաթունի, Ռուս զինւորին եղբայրական ողջոյնը կը բերէր Հայ կամաւորին եւ կը յայտնէր թէ յուսահատուելու չէ, Ջուլֆայէն մեծ ուժեր կուգան: Գիշերը, ուշատեն Անդրանիկ փորձեց իր զինւորը եւ զայն պատրաստ դռնելով ուրախացաւ: Նոյն գիշեր որոշուեցաւ ամէն մէկ վաշտին դիրքը: Սեպուհ եւ Նիկոլը ձախ թեւին վրայ, այսինքն Ուրմիոյ լիճէն սկսեալ, Սմբատ, Արտաշէս եւ Աւօյին ձիաւորները մեր աջ թեւին վրայ, իսկ անոնցմէ յետոյ Ռուս զինւորը: Այսպէս մենք Մուղանճուքի լեռները դիրք բռնեցինք, իսկ թուրք բանակը Մուղանճուքի դաշտին մէջ: Լուսադէմին կը մտնէնք մեր դիրքերը: Արշալոյսին կ'որոտան թնդանօթները, նախ թուրքերուն յետոյ մեր թնդանօթները: Հետզհետէ կը սաստկանան թնդանօթներու որոտումները եւ թրքական յարձակողականը մեր աջ թեւի վրայ: Բայց անօգուտ: Թուրքերը չեն կրնար մինչեւ իսկ մօտենալ մեր դիրքերը: Կէս օրը բաւական անցած, թուրքերը կը փորձեն այժմ մեր ձախ թեւը ճեղքել եւ անցնիլ մեր դիրքերը: Դարձեալ

անօգուտ : Մեր ետեւը , բլուրներուն վրոյ , Զօր-
Նազարրէկեան իր օգնականներով կանգնած կը
հսկէր : Հրաման չկար ոչ մէկկամաւորի լքելու
իր դիրքը , այլ միշտ պաշտպանողականի պէտք
էր մնալ : Դիրքերուն մէջէն կը լսուէին կամա-
ւորներուն քաջալերական խօսքերը իրարու ուղ-
ղուած : Այս դաշտին մէջ Քաջն Վարդան իր
թշնամին յաղթած էր : Մենք եւս այսօր պիտի
յաղթենք : Այսպէս զիրար քաջալերելով կը պա-
տասխանէին թուրք յարձակումներուն : Կէս օրը
բաւական անցած թուրքերուն թնդանօթածղու-
թիւնը կը մեղմանայ , նաեւ իրենց բուն յար-
ձակումները մեր դիրքերուն դէմ : Որով սփո-
փանք մը կը դգանք , բայց դեռ ապահով չենք
մեր դիրքերէն շարժելու համար :

Կէս օրը բաւական անցած , ժամը 3ին , բո-
լորովին կը դադրին թուրքերուն թնդանօթածը-
ղութիւնը եւ յարձակողականը : Մեզի համար
մեծ ուրախութիւն : Դիրքերէն կը դիտենք դաշ-
տը , ուր մեծ շարժում կայ : Թուրքական նա-
հանջը սկսաւ կը կանչեն մերոնք դիրքերու մէ-
ջէն : Հազիւ գլուխնիս վերցուցած դիրքերէն ,
թուրքական հրացանները կ'որոտան մեր վրայ :
Պատերազմական խաղ է կը կանչեն մերոնք ի-
րարու : Դիրքերը պէտք է պահել : Այո , եղածը
պատերազմական խաղ մըն էր : Թուրք հետեւակ
դինւորը կը նահանջէ , իսկ ձիաւորը մեր առջեւ
կանգնած է որպէս զի յարձակման չի դիմենք
թուրք հետեւակ դինւորի վրայ : Բաւական ուշ
ժամը մօտ 6ը բոլորովին կը քաշուին թուրքերը
եւ մենք հանդիստ շունչ կ'առնենք մեր դիրքե-
րուն մէջ դիտելով թշնամիին արագ փախչիլը :
Բաւական յետոյ մեր դիրքերը այցելութեան
կու գայ Անդրանիկ իր ձիաւորներով եւ մեզ կը
շնորհաւորէ : Իմ բարեկամ Զէյթունցի Յովնա-

նի հետ մասնաւոր կը խօսինք ճակատամարտի
 եւ մեր զոհերուն մասին: Անդրանիկ կը պատի
 բոլոր դիրքերը եւ կը հրամայէ որ նոյն գիշերը
 եւս դիրքերը մնանք եւ զգոյշ ըլլանք որպէսզի
 թշնամին անակնկալօրէն չը յարձակի մեր վը-
 րայ: Նոյն գիշերը մեր դիրքերը կը մնանք: Յա-
 ջորդ առաւօտը սուրհանդակը կու գայ կը հրա-
 մայէ, որ իջնենք դաշտը: Ապահով է որ թշնա-
 մին բոլորովին փախած է: Վաշտերը կարգով
 եւ «Մեր Հայրենիք»ը երգելով կ'իջնեն դաշտը:
 Կը կանգնին շարքի: Անդրանիկ իր ձիաւորնե-
 րով կու գայ եւ շնորհակալութիւն կը յայտնէ
 յետոյ յուզումնալից ձայնով կը դռչէ, «Ազգ մը
 որ ձեզի պէս հերոս զաւակներ ունի, այդ ազգը
 չի մեռնիր աշխարհիս մէջ»: Իսկ կամաւորները
 կեցցէ՛ներով եւ ծափահարութեամբ կը պա-
 տասխանեն Անդրանիկին:

Զօր. Նազարէկեան եւս իր կարգին իր ող-
 ջոյնները կը դրկէ Հայ կամաւորներուն: Իսկ
 նոյն ճակատի ընդհանուր հրամանատար Զօր.
 Չէրնէզէսով մասնաւոր բարեւներ կը դրկէ Հայ
 կամաւորներուն: Այսպէս, Ապրիլ 18ին Հայ եւ
 Ռուս քոյր ազգեր միասին կռուեցան Թուրքիոյ
 դէմ: Մենք ունեցանք մօտաւորապէս 45 սպան-
 նուած եւ 60 վիրաւոր, իսկ Թուրքերը 3,000 ըս-
 պանուած եւ 1,500 վիրաւոր ձգած էին ռազմա-
 դաշտին վրայ: Յալիլ բաշա այնքան արագ փա-
 խաւ որ չի կրցաւ տանիլ իր վիրաւորեալները:

Զինուորական տխուր կեանքիս մէջ որքան
 ուրախ էի տեսնելով Հայ կամաւորը եւ Հայ զօ-
 րավարը ամէն կողմէն հաւաքուած եւ միացած
 դուրս կը քշեն մեր Հայրենիքէն դարաւոր թըշ-
 նամին: Նոյն վայրին մէջ էր որ 451 թուին,
 Վարդանանց պատերազմը տեղի ունեցած էր,
 Հայ ազգը կռուած էր իր կրօնին ազատութեան

համար, իսկ այժմ իր գոյութեան համար կը
կռուէր եւ յաղթական կը քալէր դէպի յառաջ:

Կամաւորները երգելով կը յառաջանան
Սալմաստի հայկական աւերակ գիւղերու մէ-
ջէն, որոնք քանի մը ամիս առաջ ուրախու-
թեամբ ճամբու կը դնէին իրենց եղբայրները
դէպի ռազմաճակատ: Զօր. Նազարբէկեան ո-
րոշեց հալածել Խալիլ բաշան մինչեւ որ կատա-
րելապէս ապահովէ ճակատը: Այդ յաջող ար-
շաւանքէն վերջը, թշուառութեան մէջ տառա-
պող գինւորով Յունիս Յին կը մտնէ Վան, որ ա-
ղատուած եւ իր անկախութեան դրօշակը պար-
զած էր արդէն:

Այս դէպքերուն մէջ մասնաւոր դեր խաղա-
ցին այն հայերը, որոնք երբ Վանի մէջ ազգային
շարժումը սկսաւ, իրենք հեռագրատան մէջ
պաշտօնեայ ըլլալով, անմիջապէս կտրեցին
հեռագրական թելերը, այնպէս որ Խալիլ բա-
շան եւ Վանի կուսակալը չի կրցան իրարմէ տե-
ղեկութիւն ստանալ: Խալիլ բաշան վախցաւ որ
Վան գրաւած է Ռուսներէն եւ ինքը կը շրջա-
պատուի Ռուս բանակէն: Ուստի որոշեց փախ-
չիլ: Իսկ Վանի կուսակալը ճէվտէթ տեսնելով
որ մէկ լուր չկայ Խալիլ բաշայէն, որոշեց օր ա-
ռաջ պարպել Վանը:

ՊՕՂՈՍ ԲԱՇԱ ՆՈՒՊԱՐ

Լոյս մը հանգաւ Եգիպտոսի փառքերուն մէջէն, իր հասուն կեանքով: Տառապող Հար ազգի ծոցէն կեանք մըն ալ անհետացաւ, իր ետեւ ձգեւելով անմահ յիշատակ մը: Մեռաւ Պօղոս Նուպար իր ազգին համար պատմական եւ վճռական մէկ ժամուն: Կարծես իր ազգին խոր ցաւերն ընկճեցին իր սիրտը: Նա ժառանգած էր իր հօրը՝ Նուպար բաշա Նուպարի (1825—1899) մեծ յատկութիւնները եւ նուիրուեցաւ իր ազգին տխուր կեանքին բարելաւման նուիրական գործին: Ուղեց դարմանել, իր հօր պէս, մեր ազգին ցաւերը: Նուպար բաշա Նուպար Պերլինի Վեհաժողովի ժամանակ ուղեց, համեստ պայմաններով, փարատել Թրքահայ տառապանքը: Բայց այդ ժամանակ, կարգ մը մոլեռանդ զեկաւարներ չկրցան ըմբռնել Եւրոպային մտայնութիւնը եւ հակառակեցան Նուպարին: Մեծ հայրենասէրը ազգին ցաւով ալ դերեզման իջաւ: Եւ շարունակուեցան Թրքահայ տխուր եւ դժբախտ օրերը:

Պօղոս Նուպար 1906 Ապրիլ 15ին, Եգիպտոսի մէջ հիմնեց Հայ Բարեգործական Ընդհ. Միութիւնը, Օրմանեան Պատրիարքի միջոցով օգնութեան հասնելու համար Թրքահայութեան Վրայ հասաւ Օսմանեան կեղծ սահմանադրութիւնը (1908): Որմէ յետոյ Թուրքիան գլտորեցաւ անդունդէ անդունդ: 1909 Ապրիլի Կիլիկիոյ հայկական ջարդը, 1911—1912 Պալքանեան պա-



ՊՕՂՈՍ ԲԱՇԱ ՆՈՒՊԱՐ

տերազմի ժամանակ Թուրքիոյ համար ստեղծուած կապուժիւնը եւ 1914ի համաշխարհային պատերազմին մասնակցութիւնը ի դերեւ հանեցին Պօղոս Նուպարի պատրաստած ծրագիրը:

Պալքանեան պատերազմին առթիւ Արեւելեան Խնդիրը կրկին եւրոպական դիւանագիտութեան սեղանին վրայ եկաւ: Ամենայն Հայոց

Կաթողիկոսին առաջաբերով, Պօղոս Նուպար յանձն առաւ Ազգային Պատուիրակութեան Նախագահութիւնը, դարձեալ Թրքահայութեան տխուր կեանքը բարելաւելու մտքով: Անոր անխոնջ աշխատութեան շնորհիւ կ'ստորագրուի Կ. Պոլսոյ մէջ, Հայկական Բարենորոգումներու ծրագիրը, 1914 Յունուար 6ին, Մեծ Պետութեանց Կ. Պոլսոյ գեսապաններուն եւ թուրք կառավարութեան միջեւ: Մեծ խանդավառութիւն կը տիրէ Թրքահայերու մէջ: Բայց 1914 Նոյեմբերին Երիտասարդ Թուրքներուն համաշխարհային պատերազմին մասնակցութեամբ, կը հեռացուին բարենորոգումներու դործագրութեան հսկելու համար նշանակուած եւրոպական ներկայացուցիչները:

Պօղոս Նուպար սակայն ձեռնիշափ չի մնար ազգային դործերուն մէջ: Կ'ուզէ Ազգային Միութիւն մը հիմնել եւ համերաշխաբար դործել, այդ նպատակով Ամերիկահայութեան պատուիրակութիւն մը ղրկեց եւ գիմումներ կատարեց Հայ կուսակցութիւններուն՝ հրաւիրելով դանոնք համերաշխաբար դործել:

1919 թ. սկիզբը, երբ Դաշնակիցները Կովկաս եկան, Պօղոս Նուպար հեռագրեց Անդրանիկին, որ 30 հազարնոց բանակին ծախքը ինք յանձն առած է: Այդ ժամանակ եթէ Հայութիւնը միանար, եւ Դաշնակիցներու շնորհիւ Հայկ. բանակը կազմակերպէր իր լաւագոյն զօրավարներու եւ սպաներու ղեկավարութեամբ, այսօր հայկական կեանքը աւելի յաջող հանգամանք կ'ունենար եւ իր դարաւոր նպատակը իրագործուած: Բայց Հայ ժողովուրդին համար ճակատագրական այդ օրերուն, կուսակցական պայքարը մեծ աւեր դործեց եւ յանդեցաւ Կարսի տխուր պարտութեան:

Պատերազմին եւ ջարդերուն պատճառաւ
ստեղծուած գաղթականութեան դործին Պօղոս
Նուպար մասնակցեցաւ իր առատ նուիրատու-
թեամբ: Կոչեր ուղղեց զանազան երկիրներու
բարեկեցիկ հայերուն եւ օտար բարենպաստակ
կազմակերպութեանց՝ հայ գաղթականներուն
տառապանքը սփռիելու համար:

Վերջապէս 1930 Յունիս 25ին փակեց իր աչ-
քերը յաւիտենական քունով: Կարծես իր աղգին
ցաւերը ընկճեցին այդ առողջ սիրտը, որ ման-
կութենէն մինչեւ իր մահը բարախեց իր աղգին
համար: Պօղոս Նուպար միշտ փութաց իր տա-
ռաբաղդ եղբայրներուն ցաւերը ամօքելու եւ
անոնց սրտին մէջ վառելու յոյսի ջահ մը: Հիմ-
նեց Բարիզի լուսաւոր ոստանին մէջ Ուսանողա-
կան տուն մը, նպաստ յատկացուց չքաւոր եւ
կարօտ ուսանողներուն, որպէս զի լուսաւորեն
աղգին կեանքը: Օգնեց աղգային զանազան բա-
րենպաստակ հաստատութիւններուն:

Ծնած 1851 Օգոստոս 2ին ի Կ. Պոլիս, քաջե-
ցաւ Նգիսպատոս, որպէս աղատ եւ ապահով երկիր
ծաղկեցուց այնտեղ թէ՛ աղգաային կեանքը եւ
թէ ալ Նգիսպատոսը գեղեցկացուց ուստոր փառքը
վայելեց:

Հակառակ կարգ մը խիկարներու չարակամ
յայտարարութեանց, Պօղոս Նուպարի փառքը
պիտի կազմէ հետեւեալ Յիշատակագիրը, զոր
ան ներկայացուց Սաղաղութեան Վեհաժողովին
(Բարիզ 12 Փետրուար 1919) իբրեւ նախագահ
Հայ Աղգային Պատուիրակութեան: Այդ Յիշա-
տակագիրը ստորագրուած էր նաեւ Պր. Ա. Ա.
հարոնեանէ, իբրեւ նախագահ Հայաստանի
Հանրապետութեան Պատուիրակութեան:

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐԸ

Բովանդակ Հայ Ազգութեան անունով, որուն ընտրովի ներկայացուցիչները, Հայաստանէն եւ աշխարհի չորս կողմերէն եկած եւ Բարիդի մէջ դեռ նոր գումարած են համաժողով մը, Հայ Ազգային Պատուիրակութիւնը պատիւ ունի խաղաղութեան ժողովին ներկայացնելու ներկայ յիշատակագիրը, որ կը խտացնէ Հայ Ազգին պահանջներն ու ձգտումները:

Դարաւոր տառապանքներէ եւ ճնշումներէ ետք, մեր ազգը կը գտնուի տիեզերական բռնկումի մը վախճանին, բղկտուած եւ արիւնլուայ բայց լուսավառ հաւատքով մը կենդանի եւ տոգորուն աւելի քան ոեւէ ժամանակ, ազատագրւելու եւ իրականացնելու համար իր ազգային խէտար, շնորհիւ Դաշնակից եւ Գործակից պետութիւններու յաղթանակին, որոնք իրենց դրօշակին վրայ արձանագրած են Իրաւունքի, Արդարութեան եւ ժողովուրդներու ինքնորոշման սկզբունքները:

Հիմնուելով այս մեծ սկզբունքներու վրայ, Հայ Ազգային Պատուիրակութիւնը, իբրեւ միահամուռ կամքին ամբողջ ազգին, որուն մէկ մասը արդէն կազմած է Կովկասի մէջ Անկախ Հանրապետութիւն մը, հռչակեց ամբողջական Հայաստանի անկախութիւնը եւ դայն տեղեկագրեց Դաշնակից կառավարութիւններուն, 1918 նոյեմբեր 30ին մատուցած նօթով մը:

Հայաստան շահած է իր անկախութիւնը պատերազմին իր կամաւոր եւ ինքնաբեր մաս-

նակցութիւնը բերելով Կովկասի, Սուրիոյ եւ
 Ֆրանսայի ռազմաճակատներուն վրայ, ինչ-
 պէս նաեւ հարիւր հազարաւոր մարդիկ, կիներ
 եւ մանուկներ զոհելով՝ որոնք ինկան Դաշնա-
 կիցներու դատին հաւատարիմ մնալով, դատ-
 մը, զոր սկիզբէն իսկ Հայաստան նկատեց իր-
 բեւ իր սեփական դատը: Ռազմադաշտերու,
 ջարդերու եւ տարագրութեան ճամբաներու վը-
 րայ իր տուած հսկայական կորուստներով Հա-
 յաստան մահուն վճարեց աւելի ծանր տուրք մը
 քան ոեւէ պատերազմիկ ազգ: Դաշնակիցներու
 յաղթանակը զայն փրկեց իր բռնաւորներու լու-
 ծէն եւ միայն իր տառապանքները բաւական
 պիտի ըլլային արդարացնելու անկախութեան
 իր իրաւունքը, բայց ան տակաւին իրաւունք
 ունի արժէցնելու պատմական, ազգագրական,
 դիւանագիտական եւ բարոյական ուրիշ տը-
 եալներ, զորս ստորեւ կը ջանանք ցոյց տալ եւ
 որոնց կարեւորութիւնը ոչ նուազ է:

Եւրոպական պետութիւններու թուրքիոյ
 նկատմամբ քաղաքականութիւնը երկար ատեն
 վարուած է օսմանեան կայսրութեան ամբողջա-
 կանութեան վարդապետութիւնով: Թուրքիոյ
 ամբողջականութիւնը եւ թուրքերու կողմէ ճն-
 շուած քրիստոնեայ ժողովուրդներու հանդէպ
 իրենց ունեցած պարտաւորութիւնները իրարու
 հետ հաշտեցնելու համար, եւրոպական մեծ պե-
 տութիւնները կը ջատագովէին « բարենորո-
 գումներ »ը որպէս զի անոնցմէ կարենային օգ-
 տըլիլ ոչ—թուրք ժողովուրդները եւ վայելէին
 հաւասար վերաբերմունք, առանց ցեղի եւ կը-
 րօնքի խտրութեան:

Իրողութիւնները ցոյց տուին թէ ինչքան
 դէշ հիմնաւորուած էր այս յոյսը: Թուրքերը,
 ծեր թէ երիտասարդ, բարենորոգումներու մէջ

միմիայն տեսան Եւրոպայան խաբելու միջոց մը
եւ գործնականին մէջ շարժեցան ըստ այնմ, խա-
ղալով ճարպիկօրէն պետութիւններու մրցակ-
ցութիւններուն հետ եւ խոյս տալով անոնցմէ :
Քրիստոնեայ ազգաբնակչութիւնները Դրան աչ-
քին դառնալով կասկածելիներ, աւելի շատ դժ-
բախտ եղան քան եղած չէին օսմ. պետութեան
սկզբնական ժամանակներու մէջ :

Հայաստանի ամբողջական պատմութիւնը
օսմ. տիրապետութեան տակ վեց դարերէ իվեր
ուրիշ բան եղած չէ, եթէ ոչ երկար մարտիրո-
սագրութիւն մը պարբերական ջարդերով : Այս
հալածանքները մասնաւորաբար ծանրակշիռ
հանգամանք մը ստացան վերջին յիսուն տարի-
ներու ընթացքին, այն օրէն ի վեր երբ հայերը
հռչակեցին եւ պահանջեցին իրենց վիճակին
բարւոքումը :

Սան Սթէֆանի (1877) եւ Պերլինի (1878)
դաշնագրութիւնները, Կիպրոսի համաժողովը,
1895ին Դեսպաններու կողմէ Բ. Դրան ներկա-
յացուած բարենորոգումներու ծրագիրը, որոնք
միջազգային աքտեր էին թուրք ըէթիմի գեղ-
ծումները եւ չարիքները դարմանելու նպատա-
կին սահմանուած, հանդիսացած են անբաւա-
րար, մինչ եւրոպական դիւանագիտութիւնը
գոհացած է միշտ կիսամիջոցներով : Ամէն ան-
գամ որ Եւրոպա խօսած է բարենորոգումներու
մասին, թուրքիա պատասխանած է ջարդերով,
եւ Եւրոպա լռած է :

1908ին հայերը իրենց ամբողջ աջակցութիւ-
նը ընծայեցին Երիտ. թուրքերուն, բռնապե-
տութեան տապալուումին համար : Ե. թուրքերը
ստանալու համար անոնց աջակցութիւնը, խոս-
տացան «հաւասարութեան, եղբայրութեան եւ
ազատութեան» դարադլուխ մը : Հայերը հա-

ւատք ընծայեցին այս խոստումներուն: Ոչ իսկ տարի մը ետք, սակայն, տեղի ունեցան Ատանայի ջարդերը, ուր մօտ քսան հազար հայեր կոտորուեցան: Բայց Թուրքիոյ ամբողջականութիւնը այս անգամ արգիլեց որ պետութիւնները միջամտէին:

1912—1913ին էր, պալքանեան պատերազմէն վերջ, ճիշդ այն ատեն, երբ Լօնտօնի քօնֆէրանսը գումարուած էր Պալքաններու հարցը լուծելու համար, որ Մեծ Պետութիւնները, ի պատասխան ամբողջ Հայ Ազգի պահանջներուն միջամտեցին Դրան մօտ, ստանալու համար Պերլինի դաշնագրութեան 61րդ յօդուածով ձեւաւորուած բարենորոգումներու գործադրութիւնը:

Պոլսոյ դեսպանները պարտաւորութիւն ըստացան ուսումնասիրելու ծրագիր մը եւ պատրաստելու անոր վերջնական ձեւը: Բանակցութիւնները եղան երկար ու տքնաջան, մինչեւ որ յաղթեցին Դրան դիմագրութիւններուն: Վերջապէս վերջացան այդ բանակցութիւնները Դրան ընդունիլ տալով ծրագիր մը, աղճատուած ու փոքրացուած՝ Գերմանիոյ միջամտութեամբ որ երբէք չէր դադրած իր աջակցութիւնը ընծայելէ Թուրք դիւանագիտութեան: Ե. Թուրքերը փութացին, անմիջապէս որ Գերմանիա պատերազմ յառաջացուց, պատուել այդ համաձայնագիրը՝ որ ստորագրուած էր 1914 փետրուար 8ին: Ասիկա չարգիլեց սակայն դանոնք՝ հայերուն առաջարկելու անպատիւ դաշնագրութիւն մը. անոնք առաջարկեցին միանալ Թաթարներուն հետ եւ ոտքի կանգնիլ ռուսերուն դէմ, եւ փոխարէն, Դուռը հայերուն պիտի տար ինքնօրինութիւն մը: Գերմանիա կ'երաշխաւորէր իր դաշնակցին այս առաջարկութիւնը: Պէ՞տք է

ըսել սը հայերը պատասխանեցին սրտմտած
մերթողականով մը: Եւ Ե. Թուրքերու վրէժ-
խնդրութիւնը, պաղարիւնութեամբ կանխամը-
տածուած եւ նախապէս յայտարարուած, սոս-
կալի եղաւ:

Մենք չպիտի պատմենք այստեղ ոչ ջարդե-
րու եւ ոչ ալ տեղահանութիւններու մասին, ո-
րոնք եղան ջարդերու ուրիշ մէկ շնական ձեւը:
Ատոնց պատմութիւնը կարելի է գտնել, աղա-
ղակող վկաներու հաւաստիացումներով, կա-
պոյտ Գիրքին մէջ, որ ներկայացուեցաւ Փար-
լամէնթին Լօրտ Պրայսի կողմէ, Մօրկընթօի,
էյնըշթայնի եւ նոյն իսկ գերմանացիներու կող-
մէ գրուած գիրքերուն մէջ, ինչպէս տոքթ. Նի-
էրաթի, Հէրրի Շթուրմէրի, տոքթ. Լէփսիուսի
եւայլն: Բայց կարեւոր է հոս հաստատել որ բո-
վանդակ ազգի մը բնաջնջման գործը կազմա-
կերպուած է մէթոտաւոր կերպով Կառավարու-
թեան կողմէ, որուն հրահանգները փոխանցը-
ւած են հայկական նահանգներու պաշտօնատար-
ներուն շրջաբերականներով եւ հեռագիրներով:
Այս վաւերացութեան շատերը արդէն գտնը-
ւած եւ հրատարակուած են:

Ոչինչ թողուեցաւ դիպուածին Կառավա-
րութեան կողմէ, ո՛չ մարդասպանութիւնները,
ո՛չ աւարառութիւնները, ո՛չ խոշտանգումները
ոչ կողոպուտները, ոչ բռնի իսլամացումները,
ո՛չ անօթութեամբ մահացումները:

Այսօրինակ փորձառութենէ մը ետք, Դատը
լսուած է այլեւս. Դաշնակիցները արդէն իրենց
պետական մարդերու ըրած հանդիսաւոր յայ-
տարարութիւններով, յանձնառու եղած են Հա-
յաստանը վերջնականապէս ազատագրել բռնա-
պետութենէ մը՝ որուն նմանը պատմութեան
մէջ չկայ. թողովուրդներու պատերազմը որուն

կը հետեւի ժողովուրդներու խաղաղութիւնը,
պարտաւոր է որ Հայաստանին բերէ իր կատար-
եալ Անկախութիւնը:

Այս անկախութեան համար, զայն վաստը-
կելու համար հայերը թափեցին հեղեղանման
արիւն, ոչ միայն ջարդուած եւ տեղահանուած
մարտիրոսներու արիւնը, որոնք մահացան զար
հուրելի չարչարանքներով, այլ նաեւ արիւնը
այն կամաւորներու եւ զինւորներու՝ որոնք ին-
կան ռազմադաշտերու վրայ, դաշնակիցներու
կողքին կռուելով իրենց հայրենիքի ազատագը-
րութեան համար: Բոլոր ռազմաճակատներու
վրայ հայերը կռուեցան ինքնաբերաբար եւ կա-
մաւորապէս: Փրանսայի մէջ, օտար լէգէոնի
չարքերուն մէջ, անոնք իրենց քաջութեան հա-
մար փառքով պսակուեցան: Անոնք կռուեցան
Սուրիա եւ Պաղեստին, Արեւելեան Լէգէոնի
մէջ, ուր վազեցին Ազգային Պատուիրա-
կութեան հրաւերով: Այս Արեւելեան Լէգէոնը,
որուն մէջ հայերը ամենէն աւելի գերակշիռ էին
ինքնին միայնակ կազմած էր Փրանսական զո-
րարաթնի աւելի քան կէսը: Անոնք զօր. Ալէն-
պիի վճռական յաղթանակին մէջ աչքառու բա-
ժին ունեցան, եւ զօրավարը յարգալից ար-
տայայտութիւններ ըրաւ անոնց քաջութեան
համար: Անոնք կռուեցան նաեւ Կովկասի մէջ,
ուր առանց հաշուելու բոլոր ռազմաճակատնե-
րու վրայ ռուսական բանակներու մէջ ծառայող
150,000 հայ զինւորները, հայկական բանակ մը
կազմուած 50,000 զինւորներէ եւ հազարաւոր
կամաւորներէ, կռուեցաւ անդուլ զօր. Նազար-
բէկեանի գերագոյն հրամանատարութեան տակ
Այս բանակով էր որ Ռուսաստանի փլուզումէն
եւ Պրէսթ Լիթովսկի դաշնագրութենէ ետք,
հայերը խաբուած եւ լքուած վրացիներու կող-

մէ եւ դաւաճանուած թաթարներու կողմէ, որոնք միացած էին թուրքերուն, պաշտպանեցին ճակատը եւ եօթը ամիս ամբողջ, ուշացուցին թրքական յառաջխաղացքը: Այսպիսով անոնք Միջագետքի բրիտանական բանակին ընծայեցին յայտնի ծառայութիւն մը, ինչպէս յայտարարեց Լօրտ Րօպէրթ Սէսիլ՝ Լօրտ Պրայսին ուղղած իր մէկ պաշտօնական նամակին եւ Համայնքներու Տան մէջ հարցապնդումի մը իր տուած պատասխանին մէջ: Միւս կողմէն նաեւ մինչեւ զինադադարի կնքումը, թուրքերուն դէմ ցոյց տուած իրենց դիմադրութեամբ, անոնք դէպի կովկասեան ճակատը քաշեցին Պաղեստինի թրքական զինւորները եւ այսպէս անուղղակիօրէն օգնեցին Սուրիոյ դաշնակից բանակին յաղթանակին:

Հայերը ուրեմն ճշմարիտ պատերազմիկներ եղած են: Պատերազմի հետեւանքով իրենց ունեցած կորուստը՝ որ մէկ միլիոնը կ'անցնի, ազգի մը համար, որուն թիւը չորսուկէս միլիոն էր, համեմատաբար խիստ ծանր է քան ու եւ է ուրիշ պատերազմիկ ազգի մը կորուստը:

ԶՕՐ. ՆԱԶԱՐԲԷԿԵԱՆԻ ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հայ ազգը իր անկախութիւնը կորսնցնելէն յետոյ, իր մեծ զինւորական ծառայութիւնները բերած է Ազգին: Մեծն Պետրոսէն (1682—1725) սկսեալ մինչեւ 1915 թիւը ունեցած է հայրենասէր մեծ զօրավարներ, բայց անոնցմէ ոչ մէկը այնքան ազգօգուտ ծառայութիւն ունեցած է, որքան ունեցաւ Զօր. Նազարբէկեան: 1918 թ. դրուած էր հայ ազգային կեանքին գոյութեան հարցը: Զօր. Նազարբէկեան խոր գիտակցութեամբ եւ հերոսութեամբ կանգնեցաւ թշնամու առջեւ յաղթական եւ մշակեց այն ծաղիկը, որ այսօր կ'աճի Արարատի ստորոտը:

Զօր. Նազարբէկեան ծնած է 1855 օգոստոս 4ին Թիֆլիս, Երջանիկ ընտանիքի մը զաւակ եւ մեռած է 1931 փետրուար 19ին Թիֆլիսի մէջ: Իր ուսումը առած է Ռուս զինւորական դպրոցին մէջ: Դեռ երիտասարդ սպայ, մասնակցած է 1878 մայիսին Արտասանի դրաման: Պատերազմէն յետոյ մտած է բանակ եւ մասնակցած Ռուս—ճարոնական պատերազմին (1905): Հասած է զօրավարութեան աստիճանին եւ պատերազմէն յետոյ հրաժարական տուած է: Իսկ Համաշխարհային թիւ 1 պատերազմին, երբ սկսաւ Ռուս—թրքական պատերազմը, կամովին մտաւ Ռուսական բանակը եւ յանձն առաւ ամենագլխաւոր ճակատը: Մինչեւ 1914 դեկտ. հասաւ Կոթուր (Վանի մօտ): Այնտեղ առաջին տեսութեանս թիւրքահայերու վիճակը եւ թիւը հարցուց: Ես պատահած եմ շատ մը Ռուսահայ երեւելիներու, որոնք ծանօթ չէին թիւրքահայոց թիւին եւ կացութեան:



ԶՕՐ.՝ ՆԱԶԱՐԲԷԿԵԱՆ

Դեկտեմբերի վերջին օրերը հասաւ Ձուլֆա
 ուր քանի մը օր հանգստանալէ յետոյ անցաւ
 դարձեալ Պարսկաստան: Յունուար 15 եւ Ապ-
 րիլ 18 Դիլմանի ճակատամարտներուն մէջ յաղ-
 թելով թշնամիին, հալածեց Խալիլ բաշան, բո-
 լորովին ապահովելով այդ գիծը: Յուլիսի ըս-
 կիզքները հասաւ Վան եւ քանի մը օր վերջ ան-
 ցաւ Բիթլիս ու մասնակցեցաւ Բադուանի Յու-
 լիս 9ի վճռական ճակատամարտին: Այդ ճակա-
 տամարտին յաջորդող նահանջէն յետոյ հրա-
 ժարական տուաւ եւ քաշուեցաւ պաշտօնէն,
 մինչեւ 1918 որ հայ ազգային պատմութեան մէջ
 վճռական թուական մըն է:

Թուրքերը բնաջնջած էին թրքահայութիւ-
 նը եւ իրենց բանակները ազատօրէն սկսած էին
 յառաջանալ Կովկաս: Ռուսական բանակը յեղա-
 փոխութեան պատճառով լքած էր Կովկասը:
 Իսկ իսլամական տարրը կազմակերպման մէջ էր
 Կովկասի մէջ: Կը մնար միայն Հայութիւնը,
 ան ալ գաղթական Պաթումէն մինչեւ Թաւրիզ:
 Կուսակցական սկզբունքային պայքարը զինած
 էր եղբայրը եղբօր դէմ՝ մեր ազգային դարաւոր
 կեանքին հիմերը փոքրելով: Հակառակ այդ բո-
 լոր խոչընդոտներուն, Ձօր. Նազարբէկեան ան-
 ցաւ Երեւան: Կոչ մը ուղղեց ամբողջ Հայու-
 թեան՝ յիշեցնելով անոր տխուր անցեալը եւ
 ներկան: Համախմբեց իր շուրջը լաւագոյն հայ
 զօրավարները՝ Սիլիկեան, Փիրումեան, Արա-
 րատեան եւ ուրիշներ: Ինք անուանուեցաւ ընդ-
 հանուր սպարապետ հայ բանակին: Կազմակեր-
 պեց բանակը: Ձօր. Սիլիկեան ճակատը կ'անցնի
 եւ մայիս 24ին Սարտարապատի մէջ կը յաղթէ
 թուրքերուն: Մայիս 28ին կը յայտարարուի
 Հայաստանի Անկախութիւնը: Բայց դեռ նոր
 շունչ քաշած Հայաստանի դժբախտ ժողովուր-

դը, կը սկսի ներքին ապստամբութիւնը: Նախ
1920 Մայիս 1ի, յետոյ 1921 Փետրուար 18ի ա-
պստամբութիւնը, որոնք խեղճ ազգէն հարիւ-
րաւոր զոհեր կը խլեն: Նաեւ Զօր. Նազարբէկ-
եան աքսորի կը զրկուի կարճ ժամանակով:
Աքսորէն վերադարձին, խեղճ հայրենասէր զօ-
րավարը կը քաշուի Թիֆլիս եւ կը մնայ Թիֆլի-
սի Առաջնորդ. փոխանորդ Տ. Սիմոնեան քահա-
նայի տունը մինչեւ իր մահը 19 փետր. 1931,
անցընելով խեղճութեամբ իր վերջին օրերը:

Անդրանիկ Օղանեան ծնած է Շապին Գարահիսարի մէջ 1866ին: Բարեւէր եւ աշխատասէր ընտանիքի զաւակ, ունէր եղբայր մը եւ երկու քոյրեր: Իր փոքր եղբօր կեանքը կարճատեւ եղած է: Անդրանիկ իր նախնական կրթութիւնը ստացած է Շ. Գարահիսարի Մուշեղեան վարժարանին մէջ: Փոքրիկ հասակէն կը նետուի կեանքի պայքարին մէջ իբրեւ ատաղձագործ: Կ'ամուսնանայ 17 տարեկանին: Քանի մը տարի վերջ կ'ինը կը մեռնի եւ յետոյ զաւակը: Իր երկտասարդութեան ատեն կը մասնակցի տեղական կազմակերպութեանց:

Օր մը, Շ. Գարահիսարի մէջ, թուրք մը կը վիրաւորէ իր հայրը: Անդրանիկ վրէժը կ'առնէ եւ կը բանտարկուի: Կաշառքով բանտէն կ'ազատի եւ կ'երթայ Կ. Պոլիս, եւ կ'անցնի Պաթում:

Անդրանիկ կ'երթայ Մուշ եւ 1896ին իբրեւ հասարակ զինուոր կը մտնէ Վաղդէնի եւ Գուրդէնի խումբին մէջ:

Ատեն մը վերջ Անդրանիկ կը մտնէ Աղբիւր Սերօրի խումբին մէջ եւ իրեն կը վիճակուի դերակատարը ըլլալ չորս կարեւոր գէպքերու: Խալիլ բաշայի սպանութիւնը, Առաքելոյ վանքին կռիւը, Ծովասարի կռիւը, Աղթամարի մէջ պաշարումը եւ ազատումը:

1898ին կ'անցնի Պարսկաստան, ուր խմբեր կը կազմէ եւ կը մեկնի Սասուն: 1904 Ապրիլին կը սկսին հայ յեղափոխական կռիւները եւ շատ տխուր վիճակի կ'ենթարկուի Թրքահայութիւնը: Հիւսպատոսները կը միջամտեն եւ Անդրանիկ



ԶՕՐ. ԱՆԴՐԱՆԻԿ

կը հեռանայ երկրէն: Կը քաշուի Պուլկարիոյ Պաղարճը գիւղը, ուր կը մնայ մինչեւ Պալքանեան պատերազմը, որուն կը մասնակցի 250 կամաւորներով:

1914ի ընդհ. պատերազմին, Անդրանիկ կը մեկնի Կովկաս՝ կամաւորական խմբեր կազմելու համար: Հոկտեմբերին կ'անցնի Ղալասար գիւղը (Պարս. Ատրպատական) հոն կազմակերպելու իր գունդը: Նոյեմբեր 2ին կ'երթայ ռազմաճակատ՝ Վանի ուղղութեամբ, Զօր. Նաղարրէկեանի հրամանատարութեան տակ: Անդրանիկի գունդը կազմւած էր չորս վաշտերէ. ամէն մէկիւմ շատ 250 հոգի էր: Ունէր իր ձիաւոր խումբը: Բժշկական մասը, պարենաւորման մասը եւ ոստիկանական մասը՝ ղեկավարութեամբ Տատեանի: Վաշտապետներն էին իր հին ընկերները:

Անդրանիկ կը մասնակցի մինչեւ Կոթուր (Վանի մօտ) մղուած կռիւներուն: Իսկ Կոթուրէն կը սկսի Ռուս կառավարութեան հրահանգած առաջին նահանջը եւ դեկտ. 30ին կը հասնի Զուլֆա, պարսկահայ դադթականներով:

Սարի Կամրչի յադթական ճակատամարտէն յետոյ, Զօր. Նաղարրէկեան դարձեալ հրամանատարացաւ անցնի Պարսկաստան՝ Խալիլ քաշայի դէմ, որ այդ միջոցին մեծ դործունէութիւն ցոյց կուտար: Անդրանիկ եւս կը յառաջանայ դէպի Պարսկաստան: Զօր. Նաղարրէկեանի հետ կը մասնակցի Յունուար 15ին Սօֆիանի յադթական ճակատամարտին՝ ցիրուցան րնելով թուրքական բանակը: Ապրիլ 18ին տեղի կ'ունենայ Դիմանի մեծ ճակատամարտը, ուր Խալիլ քաշան չարաչար կը պարտուի եւ կը նահանջէ: Զօր. Նաղարրէկեան եւ Անդրանիկ կ'որոշեն հալածել Խալիլ քաշան՝ այդ գիծը բոլորովին ապահովելու համար: Այդ յաջող արշաւանքէն

յետոյ, Անդրանիկ Մայիս 3ին Վան կը մտնէ,
 Զօր. Նազարբէկեանի հետ: Վանի ժողովուրդը
 մեծ հանդէս մը կը կազմակերպէ եւ հացկերոյթ
 մը կուտայ Այգեատան թաղին մէջ: Երեկոյեան
 դէմ Անդրանիկ իր դունդով կը մեկնի Արտամէտ
 գիւղը՝ հանգստանալու: Յունիս 12ին կը մեկնի
 դարձեալ ճակատ: Կը մասնակցի Դատուանի 8
 Յուլիսի ճակատամարտին: Յուլիս 12ին Սո-
 խորդ գիւղի քովէն կը սկսի երկրորդ տխուր
 նահանջը, որ հայ ժողովուրդին համար մահա-
 ցու եղաւ: Նախ գաղթեց Վանի ժողովուրդը:
 Անդրանիկ կը հասնի Իգդիր եւ Օդոսսոսի առա-
 ջին օրերուն, իր զինուորներուն վկայական տա-
 լով կը ցրուէ եւ ինք կը քաշուի Թիֆլիս, ուր
 կը հրատարակէ Ազգային Միութեան «Հայաս-
 տան» շաբաթաթերթը, որուն միջոցաւ կը հա-
 ղորդէ հայ ժողովուրդին, որ ինք հրաժարած է
 Դաշնակցութենէն՝ անոր սխալ գործունէու-
 թեան պատճառով:

Վրայ կը հասնին 1918ի Կովկասի տխուր
 դէպքերը: Ռուսական բանակը կը քաշուի իր
 գրաւած թուրքական հողամասերէն: Անդրանիկ
 իր կամաւորներով կ'անցնի Էրզրում՝ պաշա-
 տանելու համար այդ բերդաքաղաքը: Բայց ան-
 օգուտ, Էրզրումի մէջ տիրող ներքին թշնամու-
 թեան պատճառաւ անկարելի էր կանոնաւոր
 թուրք բանակին դիմադրել: Անդրանիկ որոշեց
 նահանջել եւ Սոյի վրայով անցաւ Նախիջեւան,
 հայ բազմաթիւ գաղթականներով: Անդրանիկ
 մնաց Նախիջեւան մինչեւ զինադադար, յետոյ
 անցաւ արտասահման: 1922ի դարնան Բարիդի
 մէջ ամուսնացաւ Օր. Նուարդ Սթամպուլեանի
 հետ՝ կնքահայրութեամբ Պօղոս Նուպար բա-
 շայի: Ապա մեկնեցաւ Ամերիկա եւ հաստատուե-
 ցաւ Ֆրէզնօ, ուր մեռաւ 1927 Օգոստոս 31ին,

Եւ մարմինը փոխադրուելով Բարիզ թաղուե-
ցաւ Փէռ Լաշէզի գերեզմանատունը 1928 Յուն-
ուար 29ին, կիրակի օր:

Այդ օրը տխուր էր ամբողջ հայ դաղութը:
Իր ամբողջ շարաթուայ աշխատանքի հոգսէն ա-
ւելի ընկճւած, կեանքի տառապանքներէն աւելի
խոր ցաւ մը կը բարձրանար իր սրտէն: Այդ օրը
նուիրական եւ սուգի օր մըն էր բարիգահայ դա-
ղութին համար: Սովորականէն շատ կանուխ,
հայ ժողովուրդը սկսած էր փութալ Հայոց եկե-
ղեցին՝ իր վերջին յարգանքը մատուցանելու
Անդրանիկին, որ 30 տարիներ պայքարած էր իր
ցեղին ազատագրութեան համար: Եկեղեցին նեղ
կուգար հազարաւոր հայերու համար: Դադաղը
ծածկուած էր հայ կաղմակերպութեանց եւ ան-
հատներու կողմէն զրկուած բաղմաթիւ ծաղկէ
պսակներով: Դիակառքին ետեւ շարուած էին
Փրանսական բանակին մէջ ծառայած հայ կա-
մաւորները, որոնց կուրծքերուն վրայ կը
փայլէին իրենց պատուանշանները: Դիակառքի
առջեւէն կը տանէին Հերոսին պատուանշաննե-
րը, որոնք տրուած էին Դաշնակիցներէն: Այս-
պէս թափօրը կը հասնի Փէռ Լաշէզ: Վերջալոյ-
սի մօտ էր երբ կը սկսի եկեղեցական յուզիչ ա-
րարողութիւնը, որմէ յետոյ կը սկսին դամբա-
նականները: Սգաւոր ժողովուրդը մեկնեցաւ
շատ տխուր տպաւորութեան տակ:



A ¹¹
80597